

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
« » _____ 2014 թվականի
պետական գրանցման համարը _____
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
_____ Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«07» մարտի 2014 թ.

N 27-Ն

ք. Ստեփանակերտ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ», «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆԻ», «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱԿՏԻ», «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ», «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԿԱ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՁԵՎԵՐԸ, «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ» ՄԵԹՈՂԻԿԱՆ, «ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ» ՑԱՆԿԸ, «ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 185 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N327 որոշման կիրարկումն ապահովելու նպատակով, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

- 1) «Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվություն» ձևը՝ համաձայն հավելված 1-ի,
- 2) «Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների գրանցման մատյանի» ձևը՝ համաձայն հավելված 2-ի,
- 3) «Բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման ակտի» ձևը՝ համաձայն հավելված 3-ի,
- 4) «Բնապահպանական և բնօգտագործման վճար վճարող իրավաբանական անձանց և նրանց կողմից վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունների» ձևը՝ համաձայն հավելված 4-ի,
- 5) «Բնապահպանական և բնօգտագործման վճար վճարող իրավաբանական անձանց մասով առկա ապառքների վերաբերյալ տեղեկությունների» ձևը՝ համաձայն հավելված 5-ի,
- 6) «Արտադրական թափոնների փաստացի ծավալների հաշվարկի» մեթոդիկան՝ համաձայն հավելված 6-ի,
- 7) «Ջրային ավազան վնասակար նյութերի արտանետման համար հաշվառման վերցնելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի» ցանկը՝ համաձայն հավելված 7-ի,
- 8) «Ջրային ավազան վնասակար նյութերի արտանետման համար հաշվառման վերցնելու մասին» տեղեկանքի ձևը՝ համաձայն հավելված 8-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության 2007 թվականի դեկտեմբերի 5-ի «Իրավաբանական և ֆիզիկական անձանց բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվության», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների գրանցման մատյանի», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման ակտի», «Բնապահպանական և բնօգտագործման վճար վճարող իրավաբանական անձանց և նրանց կողմից վճարված գումարների և առկա ապառքների վերաբերյալ տեղեկությունների» ձևերը և «Արտադրական թափոնների փաստացի ծավալների հաշվարկի» մեթոդիկան հաստատելու մասին » N 185 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ս. ԹԵՎՈՍՅԱՆ

Հաստատված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և եկոնոմիկայի նախարարի 2014 թվականի մարտի 7-ի N 27-Ն հրամանով	Համաձայնեցված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն ադընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության հետ Կ. Կարապետյան	Համաձայնեցված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն ադընթեր հարկային պետական ծառայության հետ Ա. Բալայան
	« » « » 2014թ.	« » « » 2014թ.

24

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ					Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)					
ՀԱՇՎԵՏՈՒ (ՃՇՏՄԱՆ) ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ (Այն հաշվետյու եռամսյակը, որի համար ներկայացվում է հավելվածը, ճշգրտման դեպքում կից աջ սյունակում կատարվում է «X» նշագրումը)			Տարեթիվը ____ թ.		____ եռամսյակ					
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ										[1]
Իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, հայրանունը և ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով)										
Իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը										
Իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը										
Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ)հանրային ծառայության համարանիշը (ՀԾՀ)										
Իրավաբանական անձի (ֆիզիկական անձի)										

աշխատանքային (տան) հեռախոսահամարը				
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ				[2]
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ	Հաշվարկված վճարը չափա- քանակների սահմաններում (դրամ)	Հաշվարկված վճարը չափա- քանակները գերազանցող մասի համար (դրամ)	Հաշվարկված վճարը գրոյական չափաքանակ- ների դեպքում (դրամ)	Ընդամենը հաշվարկված վճարը (դրամ)
	[2.1]	[2.2]	[2.3]	[2.4]
<i>Բնապահպանական վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվության N 1.1 հավելվածի ցուցանիշներ</i>				
Ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար	[2.5]			
Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար	[2.6]			
Շրջակա միջավայր արտադրության և սպառման թափոնների տեղադրման համար	[2.7]			
Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար	[2.8]			
<i>Բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվության N1. 2 հավելվածի ցուցանիշներ</i>				
Մակերևութային ջրերի օգտագործման համար	[2.9]			
Ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների համար	[2.10]			
Կենսապաշարների օգտագործման համար	[2.11]			
Աղի արդյունահանված պաշարների համար	[2.12]			
Հանքային ջրերի հանքավայրերից արդյունահանված հանքային ջրերի և ածխաթթու գազի պաշարների համար	[2.13]			
Ոչ մետաղական օգտակար հանածոների (բացառությամբ աղի) մարված պաշարների համար	[2.14]			
Ընդամենը	[2.15]			
Վճարների գծով արտոնություններ			[2.16]	
Վճարման ենթակա բնապահպանական և բնօգտագործման վճարներ			[2.17]	

● Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվության դիմային մասի [1] բաժնում լրացվում են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ և 11.1 -րդ հոդվածներին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N327 որոշմանը համապատասխան հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) տվյալները.

● Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունը բաղկացած է դիմային մասից, N1.1 և N1.2 հավելվածներից: Բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների կողմից հաշվետու եռամսյակի համար N1.1 և N1.2 հավելվածները կազմվում են առնվազն երկու օրինակներից, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներկայացվում են շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության մարմին գրանցման: Գրանցված N1.1 և N1.2 հավելվածների հիման վրա այդ ժամկետին հաջորդող 5 օրվա ընթացքում կազմված բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունը (պարտադիր կարգով դիմային մասը, սահմանված կարգով գրանցված N1.1 և N1.2 հավելվածները) ներկայացվում է համապատասխան հարկային մարմին.

● Վճարների գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով օրենքով սահմանված կարգով ու դեպքերում առնվազն երկու օրինակից կազմված ճշտված հավելվածները ներկայացվում են շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության մարմին գրանցման (անկախ այն հանգամանքից, թե որ հավելվածում է կատարվում ճշտումը): Գրանցված N1.1 և N1.2 հավելվածների հիման վրա կազմված բնապահպանական և բնօգտագործման վճարների ճշտված հաշվարկ-հաշվետվությունը (պարտադիր կարգով դիմային մասը, սահմանված կարգով գրանցված N1.1 և N1.2 հավելվածները) հավելվածների գրանցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում ներկայացվում է համապատասխան հարկային մարմին: Հարկային կամ լիազոր մարմինների կողմից կատարվող ստուգումների ընթացքում կամ ստուգումների ավարտից հետո լիազոր մարմին ներկայացված ստուգվող կամ արդեն ստուգված ժամանակաշրջաններին վերաբերող հաշվարկների ճշտում չի իրականացվում.

● Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվության դիմային մասի [2] բաժնում արտացոլվում են հաշվետու եռամսյակում բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկային ցուցանիշներն ըստ դրանց տեսակների՝ N1.1 և N1.2 հավելվածներին համապատասխան.

● [2.5]-ից [2.8] տողերի [2.1]-ից [2.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են N 1.1 հավելվածի [4.5]-ից [4.8] տողերի [4.1]-ից [4.4] սյունակներին համապատասխանող վանդակների հաշվարկային ցուցանիշները.

● [2.9]-ից [2.14] տողերի [2.1]-ից [2.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են N1.2 հավելվածի համապատասխանաբար [10.5]-ից [10.10] տողերի [10.1]-ից [10.4] սյունակներին համապատասխանող վանդակների հաշվարկային ցուցանիշները.

● [2.15] տողի [2.1]-ից [2.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են [2.5]-ից [2.14] սյունակների տողերի համապատասխան ցուցանիշների հանրագումարները.

● [2.16] տողին համապատասխանող վանդակում լրացվում է վճարի գծով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարողին վերապահված արտոնությունների և (կամ) Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքին համապատասխան հաշվանցվող բնօգտագործման վճարների ընդհանուր գումարը՝ հաշվարկված հաշվետու եռամսյակի համար ([2.16] տողում պարտադիր լրացնելով արտոնվող վճարատեսակների՝ [2.5]-ից [2.14] տողերից համապատասխան տողերի համարները և նշելով իրավական ակտի անվանումը, հոդվածը, կետը): Արտոնություններ և (կամ) հաշվանցում նախատեսված չլինելու դեպքում [2.6] տողում լրացվում է «0».

● [2.17] տողին համապատասխանող վանդակում լրացվում է հաշվետու եռամսյակի համար վճարման ենթակա վճարների ընդհանուր գումարը ([2.15] տողի [2.4] սյունակին և [2.16] տողին համապատասխանող վանդակների մեծությունների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու դեպքում [2.17] տողին համապատասխանող վանդակում լրացվում է «0»:

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր)	Հարկ վճարողի կնիքը	Հաշվապահ
_____	_____	_____
(ազգանունը, անունը և ստորագրությունը)		(ազգանունը, անունը, և ստորագրությունը)

«_____» _____20__ թ.

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ N 1.1 ՀԱՎԵԼՎԱԾ	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունում վարվող գրանցման մատյանում գրանցման հերթական համարը N _____ «_____» _____ 20 ____թ. Գրանցում կատարողը _____ _____ (անունը, ազգանունը, պաշտոնը) _____ (ղեկավարի ստորագրությունը)		
	Կ.Տ.		

ՀԱՇՎԵՏՈՒ (ՃՇՏՄԱՆ) ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ <i>(Այն հաշվետու եռամսյակը, որի համար ներկայացվում է հավելվածը, ճշգրտման դեպքում կից աջ սյունակում կատարվում է «X» նշագրումը)</i>	Տարեթիվը ____ թ.	_____ եռամսյակ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ [3]

Իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, հայրանունը և ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով)										
Իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը										
Իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը										
Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) հանրային ծառայության համարանիշը										
Իրավաբանական անձի (ֆիզիկական անձի) աշխատանքային (տան) հեռախոսահամարը										

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ [4]

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ		Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (դրամ)	Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող մասի համար (դրամ)	Հաշվարկված վճարը գրոյական չափաքանակների դեպքում (դրամ)	Ընդամենը հաշվարկված վճարը (դրամ)
		[4.1]	[4.2]	[4.3]	[4.4]
Ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար	[4.5]				
Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար	[4.6]				
Շրջակա միջավայր արտադրության և սպառման թափոնների տեղադրման համար	[4.7]				
Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար	[4.8]				
Ընդամենը	[4.9]				

● Բնապահպանական վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվության N1.1 հավելվածի [3] բաժնում լրացվում են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության օրենքի 11-րդ և 11.1-րդ հոդվածներին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N327 որոշմանը համապատասխան հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) տվյալները.

● Հաշվետու եռամսյակի համար N1.1 հավելվածը կազմվում է առնվազն երկու օրինակից և ներկայացվում է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության մարմին գրանցման՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը: Այդ ժամկետին հաջորդող 5 օրվա ընթացքում կազմված բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունը (պարտադիր կարգով դիմային մասը, գրանցված N1.1 և N1.2 հավելվածները) ներկայացվում է համապատասխան հարկային մարմին: Վճարների գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով օրենքով սահմանված կարգով ու դեպքերում առնվազն երկու օրինակից կազմված ճշտված N1 հավելվածը (անկախ այն հանգամանքից, թե որ հավելվածում է ճշտում կատարվել) ներկայացվում է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության գրանցման: Գրանցված հավելվածի հիման վրա կազմված բնապահպանական և բնօգտագործման վճարների ճշտված հաշվարկ-հաշվետվությունը (պարտադիր կարգով դիմային մասը, գրանցված N1.1 և N1.2 հավելվածները) հավելվածի գրանցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում ներկայացվում է համապատասխան հարկային մարմին.

● Հավելվածի [4] բաժնում արտացոլվում են հաշվետու եռամսյակում բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկային ցուցանիշները: Հավելվածում արժեքային ցուցանիշները արտացոլվում են դրամներով (առանց լումաների), իսկ բնեղեն ծավալային ցուցանիշները՝ համապատասխան չափման միավորներով (ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ): [4.5]-ից [4.8] տողերի [4.1]-ից [4.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են հավելվածի համապատասխանաբար [5.14], [6.11], [7.9] և [8.11] «ընդամենը» տողերի համապատասխան հաշվարկային ցուցանիշները: [4.9] տողի [4.1]-ից [4.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են [4.5]-ից [4.8] սյունակների տողերի համապատասխան ցուցանիշների հանրագումարները:

ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՕՂԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ												[5]
Հաշվետու եռամսյակում օդային ավազան արտանետված վնասակար նյութերի անվանումները	Հաշվետու եռամսյակում արտանետված վնասակար նյութերի համապատասխան փաստացի ամբողջ ծավալները (տոննա)	Փաստացի ծավալները չափաքանակներ սահմանված լինելու դեպքում (տոննա)				Փաստացի ծավալները գրոյական չափաքանակների դեպքում (տոննա)		Բնապահպանական վճարի դրույքաչափերը (դրամ)	Հաշվարկված բնապահպանական վճարը (դրամ)			
		Ժամանակավոր չափաքանակները	Փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում	Չափաքանակները մինչև 5 անգամ գերազանցող փաստացի ծավալները	Չափաքանակները 5 անգամից ավելի անգամ գերազանցող փաստացի ծավալները	Օրենքով սահմանված չափաքանակներին հավասար կամ դրանք գերազանցող արտանետումների փաստացի ծավալները	Օրենքով սահմանված չափաքանակներին հավասար կամ դրանք գերազանցող արտանետումների փաստացի ծավալները		Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում	Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող ծավալների համար բազմապատիկ դրույքաչափերով	Հաշվարկված վճարը գրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափերով	Ընդամենը
[5.1]	[5.2]	[5.3]	[5.4]	[5.5]	[5.6]	[5.7]	[5.8]	[5.9]	[5.10]	[5.11]	[5.12]	[5.13]
ԸՆԴԱՄԵՆԸ									[5.14]			

● [5.1] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում ամրակայված աղբյուրներից օդային ավազան փաստացի արտանետված՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում նշված վնասակար նյութերի համապատասխան անվանումները.

● [5.2] սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում [5.1] սյունակում նշված վնասակար նյութերի արտանետման համապատասխան ամբողջ ծավալները (տոննաներով).

● [5.3] սյունակում լրացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների համար ժամանակավոր (մինչև

հինգ տարի ժամկետով) չափաքանակներով (ժամանակավոր չափաքանակներ) սահմանված արտանետումների ծավալները՝ հաշվարկված հաշվետու եռամսյակի համար .

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու թույլտվություն/չափաքանակ չունենալու՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.3] սյունակում լրացվում է «0».

- [5.4] սյունակում լրացվում են [5.2] սյունակում նշված ծավալների՝ [5.3] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.4] սյունակում լրացվում է «0».

- [5.5] սյունակում լրացվում են ժամանակավոր չափաքանակներ սահմանված լինելու դեպքում [5.3] սյունակի չափաքանակները գերազանցող ամբողջ ծավալները լրացվում են միայն [5.5] սյունակում (այս դեպքում [5.6] սյունակում լրացվում է «0»): Բացառապես չափաքանակների սահմաններում փաստացի արտանետումների, ինչպես նաև զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.5] և [5.6] սյունակներում լրացվում է «0».

- Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում արտանետված վնասակար նյութերի համապատասխան փաստացի ամբողջ՝ [5.2] սյունակում նշված ծավալները լրացվում են [5.7] սյունակում, եթե արտանետումների փաստացի ծավալները չեն գերազանցում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված՝ ըստ վճարի օբյեկտների համապատասխան չափաքանակները: Այդ չափաքանակներին հավասար կամ դրանք գերազանցող համապատասխան փաստացի արտանետումների ամբողջ ծավալները լրացվում են [5.8] սյունակում.

- [5.9] սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված.

- [5.10] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([5.4] սյունակի) համար հաշվարկված վճարի գումարները ([5.4] համապատասխան տող X [5.9] սյունակի համապատասխան տող).

- [5.11] սյունակում լրացվում են չափաքանակները (այդ թվում՝ ժամանակավոր չափաքանակները) գերազանցող փաստացի ծավալների ([5.5] և [5.6] սյունակների) համար օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([5.9] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափերով հաշվարկված վճարի գումարները ([5.5] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ) և ([5.6] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ) մեծությունների հանրագումարը).

- [5.12] սյունակում լրացվում են զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.7] կամ [5.8] սյունակների համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([5.9] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափերով հաշվարկված վճարի գումարները՝ ([5.7] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ) կամ ([5.8] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ).

- [5.13] սյունակի տողերում լրացվում են [5.10], [5.11] և [5.12] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [5.14] «ընդամենը» տողերում՝ [5.10], [5.11], [5.12] և [5.13] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

ԶՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՏՈՒՄԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ									[6]
Հաշվետու եռամսյակում ջրային ավազան արտանետված վնասակար նյութերի և միացությունների անվանումները	Հաշվետու եռամսյակում արտանետումների համապատասխան փաստացի ամբողջ ծավալները (տոննա)	Չափաքանակները (տոննա)	Արտանետումների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (տոննա)	Չափաքանակները գերազանցող արտանետումների փաստացի ծավալները (տոննա)	Բնապահպանական վճարի դրույքաչափերը (դրամ)	Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (դրամ)	Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող ծավալների համար բազմապատիկ դրույքաչափով (դրամ)	Հաշվարկված վճարը գրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափով (դրամ)	Ընդամենը (դրամ)
[6.1]	[6.2]	[6.3]	[6.4]	[6.5]	[6.6]	[6.7]	[6.8]	[6.9]	[6.10]
ԸՆԴԱՄԵՆԸ					[6.11]				

- **[6.1]** սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում ջրային ավազան փաստացի արտանետված՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված վնասակար նյութերի և միացությունների անվանումները.
- **[6.2]** սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում [6.1] սյունակում նշված փաստացի արտանետված վնասակար նյութերի և միացությունների համապատասխան ամբողջ ծավալները (տոննաներով).
- **[6.3]** սյունակում լրացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի կամ կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի ծավալները՝ հաշվարկված հաշվետու եռամսյակի համար: Զրոգտագործման թույլտվություն չունենալու (այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման ծավալները կամ ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները կամ կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի մասին տվյալները չեն նշվելու)՝ գրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [6.3] սյունակում լրացվում է «0».
- **[6.4]** սյունակում լրացվում են [6.2] սյունակում ծավալների՝ [6.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [6.4] սյունակում լրացվում է «0».
- **[6.5]** սյունակում լրացվում են [6.2] սյունակում ծավալների՝ [6.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([6.2] և [6.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու դեպքում կամ գրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [6.5] սյունակում լրացվում է «0».
- **[6.6]** սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույքաչափերը.
- **[6.7]** սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([6.4] սյունակի) համար հաշվարկված վճարի գումարները ([6.4] սյունակի համապատասխան տող X [6.6] սյունակի համապատասխան տող).
- **[6.8]** սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([6.5] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([6.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված վճարի գումարները ([6.5] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ).
- **[6.9]** սյունակում լրացվում են գրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([6.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված վճարի գումարները ([6.2] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ)։

• **[6.10]** սյունակի տողերում լրացվում են [6.7], [6.8] և [6.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [6.11] «ընդամենը» տողերում [6.7], [6.8], [6.9] և [6.10] սյունակների բոլոր տողերի հանրագումարները։

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՌՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՀԱՅԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ							[7]
Հաշվետու եռամսյակում շրջակա միջավայրում տեղադրված թափոնների դասերն ըստ վտանգավորության աստիճանի և տեղադրման ժամանակահատվածների	Տեղադրված թափոնների փաստացի ամբողջ ծավալները (տոննա)	Տեղադրված թափոնների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (տոննա)	Տեղադրված թափոնների չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները (տոննա)	Բնապահպանական վճարի դրույքաչափերը (դրամ)	Հաշվարկված վճար չափաքանակների սահմաններում (դրամ)	Հաշվարկված վճար չափաքանակները գերազանցող ծավալների համար՝ բազմապատիկ դրույքաչափով (դրամ)	Ընդամենը (դրամ)
[7.1]	[7.2]	[7.3]	[7.4]	[7.5]	[7.6]	[7.7]	[7.8]
Առաջին դասի							
Երկրորդ դասի							
Երրորդ դասի							
Չորրորդ դասի							
Ոչ թունավոր և ոչ վտանգավոր թափոններ							
ԸՆԴԱՄԵՆԸ				[7.9]			

• **[7.2]** սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրված փաստացի ամբողջ ծավալներն ըստ [7.1] սյունակում նշված՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դասերի (թափոնների տեսակները համախմբելով ըստ «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան վտանգավորության դասերի) և տեղադրման ժամանակահատվածների (թափոնների առաջացման պահից հաշվարկված մինչև մեկ տարի պահման դեպքում (տեխնոլոգիական փուլ, կուտակում) կամ թափոնների առաջացման պահից հաշվարկված մեկ տարուց մինչև երեք տարի ներառյալ պահման դեպքում կամ թափոնների առաջացման պահից հաշվարկված երեք տարուց ավելի պահման դեպքում)։

• **[7.3]** սյունակում լրացվում են թափոնների տեղադրման համար վտանգավորության տվյալ դասին (այդ թվում՝ տեղադրման ժամանակահատվածին) համապատասխանող թափոնների տեսակների համար «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան հաստատված թափոնների տեղադրման սահմանաքանակներով նախատեսված թույլատրելի քանակները չգերազանցող ծավալները։ Թափոնների տեղադրման սահմանաքանակներ հաստատված չլինելու դեպքում [7.3] սյունակում լրացվում է «0»։

• **[7.4]** սյունակում լրացվում են թափոնների տեղադրման համար վտանգավորության տվյալ դասին (այդ թվում՝ տեղադրման ժամանակահատվածին) համապատասխանող թափոնների տեսակների համար «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան հաստատված թափոնների տեղադրման սահմանաքանակներով նախատեսված թույլատրելի քանակները գերազանցող ծավալները։ Չափաքանակները գերազանցող ծավալների բացակայության դեպքում [7.4] սյունակում լրացվում է «0»։ Թափոնների տեղադրման սահմանաքանակներ հաստատված չլինելու դեպքում [7.4] սյունակում լրացվում են [7.2] սյունակում նշված ամբողջ ծավալները։

• **[7.5]** սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերը։

• **[7.6]** սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([7.3] սյունակի) համար հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([7.3] սյունակի համապատասխան տող X [7.5] սյունակի համապատասխան տող)։

• **[7.7]** սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող (այդ թվում՝ թափոնների տեղադրման սահմանաքանակներ հաստատված չլինելու դեպքում) փաստացի ծավալների ([7.4] սյունակի) համար

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([7.5] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([7.4] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ)։

● **[7.8]** սյունակի տողերում լրացվում են [7.6] և [7.7] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [7.9] «ընդամենը» տողերում՝ [7.6], [7.7] և [7.8] սյունակների բոլոր տողերի հանրագումարները։

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՅՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ									[8]
Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի ծածկագիրը ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի	Շրջակա միջավայրին վնաս պատճառող իրացված ապրանքի անվանումը	Արտադրողի կողմից արտադրված և հաշվետու եռամսյակում իրացված ապրանքի իրացման շրջանառությունը (դրամ)	Ներմուծողի կողմից ԼՂՀ ներմուծված և հաշվետու ժամանակաշրջանում իրացված ապրանքի իրացման շրջանառությունը (դրամ)	Բնապահպանական վճարի դրույքաչափը (%)	Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական վճար (դրամ)	Ապրանքների արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարներ (դրամ)	Ապրանքների արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մատակարարների հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և մատակարարներին վճարված բնապահպանական վճարներ (դրամ)	Ներմուծողի կողմից իրացված ապրանքների ներմուծման համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարների գումարը (դրամ)	Վճարման ենթակա բնապահպանական վճար (դրամ)
[8.1]	[8.2]	[8.3]	[8.4]	[8.5]	[8.6]	[8.7]	[8.8]	[8.9]	[8.10]
ԸՆԴԱՄԵՆԸ					[8.11]				

● **[8.1]** սյունակում լրացվում է արտադրողի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից հաշվետու եռամսյակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրացված կամ ներմուծողի կողմից 2014 թվականի հունվարի 1-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից հաշվետու եռամսյակում իրացված՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի աղյուսակում նշված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի ծածկագիրն ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի։ Ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագիրը (ինչպես նաև նույն համառոտ անվանումը) ունեցող ապրանքները, միաժամանակ և՛ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված, և՛ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված լինելու դեպքում դրանց մասով լրացվում են առանձին տողեր։

● **[8.2]** սյունակում լրացվում է [8.1] սյունակում նշված ծածկագրերին դասվող՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի աղյուսակում նշված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի համառոտ անվանումը։

● **[8.1] և [8.2]** սյունակներում չեն լրացվում ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8702, 8703, 8704 և 8705 ծածկագրերին դասվող ավտոմեքենաները։

● **[8.3]** սյունակում լրացվում է արտադրողի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից հաշվետու եռամսյակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրացված համապատասխան ապրանքի իրացման շրջանառությունը (առանց ավելացված արժեքի հարկի)։

● **[8.4]** սյունակում լրացվում է ներմուծողի կողմից 2014 թվականի հունվարի 1-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից հաշվետու եռամսյակում իրացված համապատասխան ապրանքի իրացման շրջանառությունը (առանց ավելացված արժեքի հարկի)։

● **[8.5]** սյունակում լրացվում է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի աղյուսակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող և իրացվող համապատասխան ապրանքի համար դրա իրացման շրջանառության նկատմամբ սահմանված համապատասխան դրույքաչափը:

● **[8.6]** սյունակում լրացվում է շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար հաշվարկված վճարը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից հաշվետու եռամսյակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրացված համապատասխան ապրանքի համար լրացվում է [8.3] սյունակի համապատասխան տողի նկատմամբ [8.5] սյունակի համապատասխան տողի դրույքաչափով հաշվարկված գումարը, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ներմուծված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից հաշվետու եռամսյակում իրացված համապատասխան ապրանքի համար՝ [8.4] սյունակի համապատասխան տողի նկատմամբ [8.5] սյունակի համապատասխան տողի դրույքաչափով հաշվարկված գումարը:

● **[8.7]** սյունակում լրացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից հաշվետու եռամսյակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրացված ապրանքների արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ 2014 թվականի հունվարի 1-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ներմուծված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված բնապահպանական վճարների գումարը:

● **[8.8]** սյունակում լրացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներից հաշվետու եռամսյակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրացված ապրանքների արտադրությունում անմիջականորեն օգտագործված՝ 2014 թվականի հունվարի 1-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մատակարարների (բացառապես շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծող իրացնողների և արտադրող իրացնողների) հաշվարկային փաստաթղթերում առանձնացված և մատակարարներին վճարված բնապահպանական վճարների գումարը:

● **[8.9]** սյունակում լրացվում է ներմուծողի կողմից հաշվետու եռամսյակում իրացված՝ 2014 թվականի հունվարի 1-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված ապրանքի համար մաքսային հայտարարագրերում առանձնացված և պետական բյուջե վճարված վճարի գումարը:

● **[8.10]** սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակում վճարման ենթակա վճարի գումարը: Ներմուծողի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված և հաշվետու եռամսյակում իրացված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի մասով լրացվում է [8.6] սյունակի և [8.9] սյունակի դրական տարբերությունը, իսկ բացասական տարբերության տեպքում լրացվում է «0»: Արտադրողի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված և հաշվետու եռամսյակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրացված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի մասով լրացվում է [8.6] սյունակի և ([8.7] սյունակի համապատասխան տող + [8.8] սյունակի համապատասխան տող) մեծության դրական տարբերությունը, իսկ բացասական տարբերության դեպքում լրացվում է «0»:

● **[8.11]** սյունակների «ընդամենը» տողերում լրացվում են [8.6], [8.7], [8.8], [8.9] և [8.10] սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ N 1.2 ՀԱՎԵԼՎԱԾ	<i>Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունում վարվող գրանցման մատյանում գրանցման հերթական համարը N</i> « ____ » _____ 20 ____ թ. <i>Գրանցում կատարողը</i> _____ <i>(անունը, ազգանունը, պաշտոնը)</i> _____ <i>(ղեկավարի ստորագրությունը)</i> Կ.Տ.										
ՀԱՇՎԵՏՈՒ (ՃՇՏՄԱՆ)ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ <i>(Այն հաշվետու եռամսյակը, որի համար ներկայացվում է հավելվածը, ճշգրտման դեպքում կից աջ սյունակում կատարվում է «X» նշագրումը)</i>	Տարեթիվը ____ թ. _____ Եռամսյակ _____										
[9]											
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ											
Իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, հայրանունը և ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով)											
Իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը											
Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 12.5%; height: 20px;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> </tr> </table>										
Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) հանրային ծառայության համարանիշը	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 12.5%; height: 20px;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> </tr> </table>										
Իրավաբանական անձի (ֆիզիկական անձի) աշխատանքային (տան) հեռախոսահամարը											
[10]											
ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ											
ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 20%; text-align: center;">Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (դրամ)</td> <td style="width: 20%; text-align: center;">Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող մասի համար (դրամ)</td> <td style="width: 20%; text-align: center;">Հաշվարկված վճարը գրոյական չափաքանակների դեպքում (դրամ)</td> <td style="width: 40%; text-align: center;">Ընդամենը հաշվարկված վճարը (դրամ)</td> </tr> <tr> <td align="center">[10.1]</td> <td align="center">[10.2]</td> <td align="center">[10.3]</td> <td align="center">[10.4]</td> </tr> </table>	Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (դրամ)	Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող մասի համար (դրամ)	Հաշվարկված վճարը գրոյական չափաքանակների դեպքում (դրամ)	Ընդամենը հաշվարկված վճարը (դրամ)	[10.1]	[10.2]	[10.3]	[10.4]		
Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (դրամ)	Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող մասի համար (դրամ)	Հաշվարկված վճարը գրոյական չափաքանակների դեպքում (դրամ)	Ընդամենը հաշվարկված վճարը (դրամ)								
[10.1]	[10.2]	[10.3]	[10.4]								
Մակերևութային ջրերի օգտագործման համար [10.5]											
Ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների համար [10.6]											
Կենսապաշարների օգտագործման համար [10.7]											
Աղի արդյունահանված պաշարների համար [10.8]											
Հանքային ջրերի հանքավայրերից արդյունահանված հանքային ջրերի և ածխաթթու գազի պաշարների համար [10.9]											
Ոչ մետաղական օգտակար (բացառությամբ աղի) հանածոների մարված պաշարների համար [10.10]											
Ընդամենը [10.11]											

- Բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվության N1.2 հավելվածի [9] բաժնում լրացվում են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ և 11.1-րդ հոդվածներին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 327 որոշմանը համապատասխան հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) տվյալները:

- Հաշվետու եռամսյակի համար N1.2 հավելվածը կազմվում է առնվազն երկու օրինակից և ներկայացվում է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության մարմին գրանցման՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը: Այդ ժամկետին հաջորդող 5 օրվա ընթացքում կազմված բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունը (պարտադիր կարգով դիմային մասը, գրանցված N1.1 և N1.2 հավելվածները) ներկայացվում է համապատասխան հարկային մարմին: Վճարների գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով օրենքով սահմանված կարգով ու դեպքերում առնվազն երկու օրինակից կազմված ճշտված N1.2 հավելվածը (անկախ այն հանգամանքից, թե որ հավելվածում է կատարվում ճշտումը) ներկայացվում է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության մարմին գրանցման: Գրանցված հավելվածի հիման վրա կազմված բնապահպանական և բնօգտագործման վճարների ճշտված հաշվարկ-հաշվետվությունը (պարտադիր կարգով դիմային մասը, գրանցված N1.1 և N1.2 հավելվածները) հավելվածի գրանցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում ներկայացվում է համապատասխան հարկային մարմին:

- Հավելվածի [10] բաժնում արտացոլվում են հաշվետու եռամսյակում բնօգտագործման վճարների հաշվարկային ցուցանիշները: Հավելվածում արժեքային ցուցանիշները արտացոլվում են դրամներով (առանց լումաների): [10.5]-ից [10.10] տողերի [10.1]-ից [10.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են հավելվածի համապատասխանաբար [11.11], [12.11], [13.12], [14.11], [15.11], և [16.11] «ընդամենը» տողերի համապատասխան հաշվարկային ցուցանիշները: [10.11] տողի [10.1]-ից [10.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են [10.5]-ից [10.10] սյունակների տողերի համապատասխան ցուցանիշների հանրագումարները:

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ									[11]
Հաշվետու եռամսյակում մակերևութային ջրերի օգտագործման տեսակներն ըստ օգտագործման նպատակների	Հաշվետու եռամսյակում ջրօգտագործման փաստացի ամբողջ ծավալները (մ ³)	Հափաքանակները (մ ³)	Զրոգտագործման փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (մ ³)	Հափաքանակները գերազանցող ջրօգտագործման փաստացի ծավալները (մ ³)	Բնօգտագործման վճարի դրույքաչափերը (դրամ)	Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (դրամ)	Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող ծավալների համար բազմապատիկ դրույքաչափով (դրամ)	Հաշվարկված վճարը գրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափով (դրամ)	Ընդամենը (դրամ)
[11.1]	[11.2]	[11.3]	[11.4]	[11.5]	[11.6]	[11.7]	[11.8]	[11.9]	[11.10]
ԸՆԴԱՄԵՆԸ					[11.11]				

- **[11.1]** սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում մակերևութային ջրերի փաստացի օգտագործման տեսակներն ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 28-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N158 որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի (այսուհետ՝ հավելվածում Դրույքաչափեր) I բաժնով սահմանված օգտագործման նպատակների.
- **[11.2]** սյունակում լրացվում են [11.1] սյունակում նշված ջրօգտագործման յուրաքանչյուր տեսակի մասով հաշվետու եռամսյակում օգտագործված մակերևութային ջրերի համապատասխան փաստացի ամբողջ ծավալները.
